

եղանակներով միշտ երեւան եկած են եւ կու գան, եւ շատ անգամ աղիտաւոր վախճաններու ալ կը յանդին. բայց պատմութիւնը իր անաչառ գատաստանով ամէն բան կը վճռէ ուղիղ: Այլտօի մասին եղած բոլոր բամբասանքներն սեւէ նշանակութենէ զուրկ են. միակ նշանակութիւնը՝ նախանձոտներուն դատապարտութիւնն է:

### ԳՅԹ, ԿՈՒՈՏ ԵՒ ԿՊՈՒՍՈՅ ՊԵՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆԸ

Այնպիսի ժամանակ մը, ուր Պոլսոյ պատրիարքական Աթոռը կատարելապէս ինկած էր՝ իրարու ձեռքէն բարձ ու գահ յափշտակողներու արարքներուն մէջ եւ պատրիարքներ, վարդապետ եպիսկոպոս, բնաւ ապահով չէին իրենց վաղուանը վրայ, այնպիսի ժամանակ մը, ուր Պոլսոյ գրական ու կրօնական կեանքը յուսահատական վիճակ մ'ունէր եւ այս վիճակը չափազանց կը ծանրանար՝ ֆռանկութեան կամ կաթողիկոսութեան արծարծած բարդ բարդ խնդիրներով եւ Երուսաղէմի Աթոռին առթած մտահոգութիւններով, վերջապէս այնպիսի ատեն մը, ուր նոյն իսկ Էջմիածնի կաթողիկոսութիւնն ալ արտաքին ու մանաւանդ ներքին պատճառներով՝ չէր կրնար ծանրութեան կենդրոն մ'ըլլալ, ընդհակառակը կը պատրաստուէր ամէնէն

Հայագործ էջ 86.) հոն կայնաւ յիշատակութիւն մը Միթար Ապարանեցիէն. «Ծափ հոյեր» ու մասին — «Եւ ոմանք կոչին Ծափ հաբր, որ լեզուով եւ գրով ազգաւ են Հոյք, բայց դաւանութեամբ եւ ամենայն օրինօք են Յոյք, եւ ամենայն կարգաւ հնազանդ նոցա, որպէս յայտ է այնորիք որք են ի յԵզընկէն եւ ի յայլ Հոռոմոց տուն եւ ի կաֆէն, ի Ղրիմն եւ ի յայլ բազում տեղիս», (անդ էջ 552): Թէ ս'վ էր այն սուրբը, որուն Ծափ կ'ըսեն եղեր. հաւանաբար Նարեկացիին կ'ակնարկէ, եթէ ոչ ուրիշներն որովհետեւ ամէն տեղ ու ամէն ատեն իրենց լեզուով ու գրով մտրուութիւններու եւ նախապաշարու մեքրու դէմ կռուողները նախատուած են: